

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒՍՆԳՈՒԹԻՒՆՆԵՐ

(Այս աշխատութիւնը քաղված է զանազան հեղինակութիւններից և զմտադրալիս ղոկաօր էրիսմանի զրովածներից) :

I

Իւրաքանչիւր Հիւանդութիւն կարելի է ներկայացնել իւրեւ մարդի մի գործարանի կանոնաւոր կատարման խանգարումն, որն առաջանում է ուղղակի պատահական արտաքին վնասակար ազդեցութիւններից և կամ կեանքի անյարմար պայմաններից, — ցրտահարութիւնը, անբաւական կամ նեխեալ կերակուրը, անչափ ուժգնութիւնը, ապականված օդը — Հիւանդութիւնների պատճառներ են:

Իսկ մի առանձին կարգ Հիւանդութիւններ կան, որոնք թէ իւրեանց ծագման հանգամանքներով և թէ տարածման եղանակով խիստ զանազանվում են միւս Հիւանդութիւններից, դա վարակիչ Հիւանդութիւններ են, որոնց առաջանալու համար իսկապէս հարկաւոր է առանձնապէս նորան յատուկ պատճառ, հարկաւոր է առանձին Հիւանդաբեր թոյն: Ցրտահարութեանից իւրեւ չէ կարելի ստանալ, դորա համար անշուշտ հարկաւոր է, որ կազմուածքը թուլանալով, յայտնի թոյնով, որի էութիւնը ղեռ մեղ յայտնի չէ, բայց նորա գոյութիւնը անկասկածելի է, և որին անուանում ենք իւրեւ չէ թոյն, նմանապէս շէշէլ նեխեալ կերակուր կամ խակ պտուղ գործածելուց չէ առաջանում, այլ յայտնվում է կազմուածքի մէջ մի առանձին նիւթ ընդունելուց յետ, որի յատկութիւնը նմանապէս մեղ յայտնի չէ, բայց գոյութիւնը հաւատալի է, և որին անուանում ենք թէ՛ թոյն, մի և նոյն ժամանակ պէտքէ ասել որ իւրեւ չէ թոյն ուրիշ Հիւանդութիւն չէ կարող առաջացնել բացի կարմրուկից, տիֆային թոյնը — թէ՛, խօլերայինը — իւրեւ չէ:

Պատճառի և հետեանքի այսպիսի յարատեւութիւնը միւս անվարակիչ Հիւանդութիւնների մէջ չէ պատահում, մի և նոյն ցրտահարութիւնը, նախելով անհատի յատկութեանը, կարող է մինին իւրեւ չէ առաջացնել, իսկ միւսին չէ, երրորդին առաջացնել կամ իւրեւ չէ, և դարձեալ հարրուղիւր կարող է առաջանալ զանազան պատճառներից, որոնք ներգործում են քթի լորձիւնոտ մաշկի վերայ:

Իւրաքանչիւր անհատի Հիւանդանալու տրամադրութիւնը, որ շատ ուրիշ Հիւանդութիւնների մէջ վճռողական կերպով է ներգործում, վարակիչ Հիւանդութիւնների մէջ, այնքան նշանակութիւն ունի, որքան ղիւրազգաց է անհատը ղէպի թոյնը և որքան խիստ է վարակման ոյժը:

Յայտնի է որ մարդկային այլ եւ այլ ցեղերը զանազան տրամադրութիւն ունին դէպի հիւանդանալը՝ բայց մի և նոյն թոյնը մի և նոյն հիւանդութիւն է երեւցնում։ Մենք դորանով չենք կամենում ասել որ պատահական արտաքին ազդեցութիւնները — կլիմայի և օդերեւոյթական հանգամանքները, կերակրի յատկութիւնը, ընկերավարական դրութիւնը և այլն — չեն ազդում հիւանդութիւնների ծագման վերայ, ընդհակառակն, ինչպէս որ յետոյ կիսուենք նշանաւոր դեր են խաղում որովհետեւ նոքա կամ նպաստում են կամ արգելում են հիւանդութիւնների յատկական (սպէցիֆիկական) սերմերին դարձանալուն կամ տարածվելուն և կամ մեծացնում կամ փոքրացնում են առանձին անհատների դէպի հիւանդութիւն ունեցած տրամադրութիւնը, թէև ինքն ըստ ինքեան, կլիմայական, օդերեւոյթական, տեղային և անյարմար ընկերավարական հանգամանքները — վատ կերակուրը, անպիտան բնակարանը, — չեն կարող վարակիչ հիւանդութիւններ երեւցնել, մինչև որ նոցա թոյնը նոցա սերմը գոյութիւն չունենան, և մի և նոյն ժամանակ այդ հանգամանքների միջոցով, մի վարակիչ հիւանդութիւն օւրիշ վարակիչ հիւանդութեան չէ փոխվում։

Վարակիչ հիւանդութիւնները նմանապէս ունին մի յատկութիւն, որով բոլորովին բաժանվում են միւս հիւանդութիւններից. այդ հիւանդութիւններով վարակվում են ոչ թէ առանձին մարդիկ, ինչպէս որ պատահում է ցրտահար հիւանդութենից, մարսօղութեան կամ արիւնադարձման գործարանների խանգարումից, այլ միշտ ուր որ յայտնվում են նոքա, վարակում են կարճ միջոցում բնակիչներից շատերին, զորա պատճառով նոցա անուանում են համաճարակ (էպիդեմիան) հիւանդութիւններ։

Երբեք է որ միւս հիւանդութիւնները, օրինակ թղբերի բորբոքումը, հազը, որովայնալուծութիւնը և այլն մեծ մասամբ կարող են երեւի տարվան յայտնի ժամանակներում և օւրիշ միջոցներում կարող են անհետանալ։ Բայց վարակիչ հիւանդութիւնների համաճարակում օւրիշ պատկեր է ներկայացնում. սովորական ժամանակ այդ հիւանդութիւններից շատերը չեն յայտնվում և ոչ որ նոցա վերայ չէ մտածում անգամ, հիւանդութիւնը առաջանում է յանկարծակի անհոգ բնակիչների մէջ, սկզբից յափշտակում և առանձին զոհեր, բայց սուրորաբար սաստիկ արագ առաջադիմութիւն է անում և փոքր միջոցում հասնում է իւր բարձր զարգացմանը։ Ետոյ համեմատաբար կարճ միջոցում անհետանում է բոլորովին։ Այդ տեսակ համաճարակման սաստիկ զօրանալը կամ թուլութիւնը կախում ունի մի կողմից արտաքին հանգամանքների թոյնի զարգացման կամ տարածման նպաստումից, և միւս կողմից բնակիչների դէպի թոյն ունեցած դիւրագրգռողութենից և նոցա թոյնի ազդեցութեամբ հիւանդանալու տրամադրութենից։ Ուրեմն անհատների դէպի թոյն ունեցած զանազան զգացողութիւնը և թոյնի նշանաւոր կենդրոնանալը, որով նա կարողանում է ներգործել, պատճառում են այն օտարօտի երեւոյթը, որ համաճարակումն խնայում է բնակիչների շատ թիւ քիչ մասը, սակայն այս ևս պէտք է յիշել, որ կան այնպիսի

պայմանները որոնք վարակիչ հիւանդութիւններին համաճարակ տարածման
 գլխաւոր յատկութիւնները շատ ազդեց կերպով շեն արած այն յոռւմը։ Այդ
 արատահումը մեծ քաղաքներում և ուր սովորաբար նշանաւոր վարակիչ հիւ-
 անդութիւնները տներն զհատարար տեսում են և չկայ միջոց որով բնա-
 կիւնները կարողանային աղատ լինել սոյնպիսի հիւանդութիւններից։ Այս
 տեսակ երկնայինները կարելի է բացատրել եթէ ընդունենք որ կան տեղեր
 ուր գտնվում են թուեաւոր նիւթերի շատ լծէ քիչ տարածման և զարգաց-
 ման նպաստող պայմաններ ուստի հիւանդութիւնը տեղական բնաւորու-
 թիւն է ստանում և կարողանում երբեմն սաստկանալ և համաճարակ ըն-
 դարձակումն ստանալ և քանի մի շարաթում ընակիւնների շատ լծէ քիչ
 մասը հարուածել մաթալանով մաքցող սոց մզով մէկ լցնող խոցրանաղու-
 ազով առի — զգմացմանսմա՞ մաթալանով մզ զանգալս մ միջոցով
 զմաթալանով զմաթալանով զմաթալանով
 II
 Առաջ քան վարակիչ հիւանդութիւնների այլեւայլ ձևերի վերաբերու-
 անք և ախտաբեր լծոյների պատճառներ համապատասխանաբար որ
 քան որ ներումէ գիտութեան վերջին հայնացքը — աւելորդ է ժանտիկա-
 նալ համաճարակ հիւանդութիւնների պատմութեան մի մասի հետ որ ընդ-
 հանուր պատմութեան մի հետաքրքիր կտոր է։
 Համաճարակ հիւանդութիւնները հին ժամանակից սկսած մարդկութեան
 սերունդի մտրակ էին յիշվում և հին վկայագիրները այդ հիւանդութիւն-
 ներից պատճառած աւերմունքը աղետալի են նկարագրում և ճշմարիտ որ
 մեծ մահաբեր համաճարակները ամենուրեք զարհուրանք և երկիր լին-
 տարածում և նորա աւել նշանակութիւն ունին ազգերի քաղաքակրթու-
 թեան զարգացման վերայ քան լծէ մարդկութիւն խոռովեցնող և շիտկող
 միւս դէպքերը որոնք առաջնահումեն ցած կրքերի կամ տնտեսական պա-
 ճանջողութիւնների զարգացումից նմանապէս ազգերի քաղաքակրթութեան
 դրութիւնը առանց աղիւնցութեան չէր մնում վարակիչ հիւանդութիւնների
 ընթացքի և զօրանալու վերայ պատմութիւնը ցոյց է տալիս որ բնակիչ-
 ների մտաւորական և տնտեսական ստորին դրութիւնը, սովոր պատերազմ-
 ները և այլն և այլն նպաստում էին համաճարակման տարածմանը ու
 զոհերի թիւը բազմապատկում և միւս կողմից ևս մենք նկատում ենք քանի
 որ ժողովրդական բարեկեցութիւնը աճում է քանի որ ժողովուրդը լուսա-
 ւորվում է կրթվում և համաճարակներ քիչ են կործանիչ չունենալ
 կիւններին քիչ են հարուածում և այդ երեւոյթը հասկանալի է եթէ մտաբե-
 րենք որ տնտեսական բարեկեցութեանը և ժողովրդի լուսաւորութեան
 զարգացման համեմատ առողջապահական պայմաններն ևս բարւոյթվում են
 իւրաքանչիւր անհատ կարողանում է դիւրութեամբ պահպանել իրան վա-
 րակումից և զօրապատճառով վարակիչ հիւանդութիւնների տարածումն
 ևս սահմանափակվում է։
 Իբրեւ օրինակ վարակիչ հիւանդութիւններից առաջացած զարհուրանքի
 և մաքի ընդհանուր խաւարման կապում մի համադրում 14 դարում ար

քողերով, նոքա շրջում էին քաղաքից քաղաք, ներկայացնում էին նախա-
տակների գերեզմաններին, հրապարակաւ մտրակում էին միմեանց, երգելով
հոգևոր երգեր, նոցա նպատակն էր խաղաղութիւն խնդրել երկնքից և ստի-
պել մարդիկներին ապաշխարել և իւրեանց օրինակին հետեւել և այլ
Ժանտախտի ժամանակ այդ տեսակ հանդէսներ (սաքաիկ) տարածվեցան
Գերմանիայում, Ֆրանսիայում և Եւրոպայի քանի մի տեղերում, վերջը
մտրակադարկները սկսեցին այլ և այլ իրաւունքներ ևս գործ դնել, նոքա
հաստատում էին իրր երկնքից են ուղարկված և կամենում էին հրաշք-
ներ գործել, այդ պատճառով հոգևորականութեան հետ կռուեցան, միև-
նոյն ժամանակ նոքա սկսեցին և մարմնաւոր կառավարութեան իրաւունք
ներին ձեռնամուխ լինել, սկսեցին այլ և այլ պահանջներ յայտնել, նո-
քա հետ ևս կռուեցան, վերջը թէ հոգևորականներ և թէ տերութիւններ
պաշտպանելով իւրեանց արտօնութիւնները, արգելեցին այդ հանդէսները
1350 թ. չորս մ Եւրոպայում զամբիշ քաղաքում սպանում արգելադա-
նւորների հալածումն ևս վկայում է մարդիկների սպօրին կրքերի յուզ-
մունքը, երբ Ժանտախտ երևեցաւ, սկսեցին մեղադրել հրէաներին, իրր
նոքա թունաւորում են ջրհորները և Ժանտախտ տարածում են պատ-
ճառում, հալածանքները բազմացան, Ստրասբուրգում 1884ից 900 հրէա-
նորին պրեցին, 1349 թ. մարդիկների ամբոխները մանգաղներով զինաւոր-
ված անցնում էին Տէյն գետի վերայ եղած քաղաքներով, քանդելով և
կողոպտելով բոլորը ճանապարհում, Մայինց քաղաքում 12,000 հրէաներ
իւրեանց պրեցին, որ հալածանքներից ազատվին, թէ Գերմանիայում և
թէ Եւրոպայի միւս մասներում հազարաւոր հրէաներ ենթարկված էին
տանջանքների, միևնոյն ժամանակ արժանի է յիշել հրէաների և նոցա
կանանց կամակործութիւնը, Ա. Թիւրկմալով, որ քրիստոնեաները չիլին և
Հմրտեն մանսէկներին, նոքա ձգում էին իւրեանց մանուկներին քորեղված
կրակի մէջ և իւրեանք ևս այրվում էին, Այդ դարհաւել և միջոցին ամե-
նայն իսկ սպասելու էր, չիլի նոքա մի գողաք լայն բնակիչ զգոմսիմազ
Մինչդեռ Գերմանիայում այրում էին հրէաներին, Իսպանիան այն ժա-
մանակ աւելի զարգացած և լուսաւորված լինելով աշխատում էր պաշտ-
պանել իւրեան աւելի խելացի և մարդավայել միջոցներով, 1403 թ. Աե-
նիտիւում երկը առօրջ խնամ, հոգատարներ նշանակվեցան, որոնց տուած
էր առանձին իրաւունք Ժանտախտի դէմ բոլոր միջոցներ գործ դնելու, այդ
ժամանակներում առաջին անգամ Ալենտիկում հիմնվեցաւ հիւանդանոց
Ժանտախտով վարակված հիւանդների համար, զոր 1580 թ. Եւրոպայում
մի վեճաւոր լիցքիս զգոմսիմազ քա. քիտովորմ մարկ ազոդ պեւանի
մեղաքա? զոյն աքսմ լուսմ, զգոմսիմազ լիարոծ միջոցա մի ժառանգաւ
Համաձարակ հիւանդութիւնների Խոտարեր, թոյնի, էութիւնը անդ զեռ
յայտնի չէ, նոքա մի քանի յարկութիւններ են արտայայտում որոնցով
մեղաւորապէս կարելի է նոցա բնութեան վերայ հասկացողութիւն քաղմել
Արանց ընկնելու զանազան տեսութիւնների և ենթադրութիւնների մէջ, որ

այս վերջին ժամանակներում յայտնվեցան, մենք կաշխատենք համառոտ տեղեկութիւն տալ այն հիմքերի մասին, որոնց վերայ գիտնականներից շատերը ենթադրում են, որ վարակիչ նիւթերը ամենաստորին կենդանիների կազմութիւն ունին:

Վարակիչ հիւանդութիւնների թոյնների յատկութիւններից աւելի որոշ երևում է նոցա ընդունակութիւնը, պարզ ասենք չափազանց արագ բազմանալը: Մի հիւանդ, որի մարմնի մէջ վարակիչ թոյն կայ, կամ մի ապրանքի հակ, որ պարունակում է իւր մէջ այդ թոյնը, կարող է քաղաքի մէջ ներս բերել հիւանդութիւն և պատճառ դառնալ ամբողջ համաճարակման, որ հրդեհի նման տներ և փողոցներ կարող է վարակել: Հիւանդութիւնը ուղղակի վարակելուց յետոյ չէ յայտնվում, այլ անցնում է մի քանի միջոց: Այս հանգամանքը առիթ է տալիս մտածելու, որ թոյնի բազմանալը վարակված մարմնի մէջ է կատարվում: Այս թագուցեալ վարակման շրջանը շարունակվում է ընդհանրապէս մի քանի օր և երբեմն երկու շաբաթ և աւելի, (ինչպէս աղիքների տիֆի և խօլերայի ժամանակ), մարդի մէջ մտած թոյնը բազմանում է այնքան, որքան որ բաւականանում է իւանգարելու մարդի գործարանների կանոնաւոր ընթացքը և յայտնելու հիւանդութեան առաջին երևոյթները: Սորանից պէտք է եզրակացնել, որ վարակիչ նիւթը հասարակ քիմիական, ուրիշ բառով, մեռեալ նիւթ չէ, որովհետև քիմիական թոյնները, ինչպէս որ յայտնի է, ուրիշ կերպով են ներգործում: քիմիական թոյնի ներգործութիւնը ժամանում է ուղղակի կազմուածքի մէջ մտնելուց յետոյ և համեմատ թոյնի քանակութեանը ներգործում է կատարեալ զօրութեամբ, և եթէ մարդս չէ մեռնում թոյնի ազդեցութենից, նա արդէն ազատված է, պատճառ որ թոյնը մարմնի մէջ մտնելուց յետոյ, իսկոյն սկսում է զանազան ճանապարհներով դուրս գալ, որին համեմատ եւ թունաւորելու ոյժը պակասում է: Բազմանալու յատկութիւնը պատկանում է միայն կազմուածքներին, ուրեմն նայելով այս հանգամանքին, պիտի եզրակացնենք, որ այդ վարակիչ նիւթերը կազմուածքներ (организмы) են: Երկրորդ աւելի զօրաւոր հիմքը այդ եզրակացութեանն այն է, որ քանի մի վարակիչ հիւանդութիւնների միջոցում (սիբիրեան վէրք, անդրազարձ տենդ) հիւանդների արիւնի մէջ իսկապէս գտել են շատ փոքրիկ կողմնակի մարմիններ, որ վերաբերում են ստորին սունկերին (бактерии, кокки) և որոնց թիւը աւելի բազմանում է ջերմի սաստիկ արեւածի ժամանակ: Որ այդ փոքրիկ մարմինները ներկայացնում են վարակիչ նիւթեր, կարելի է բոլորովն համոզվել այն ժամանակ, երբ կարելի է չի նի առողջներին այդ մարմիններ պատուաբանել և եթէ պատուաստելուց յետոյ համապատասխան հիւանդութիւն կարողանայ առաջանալ, պէտք է որ վերջոյիշեալ եզրակացութիւնը հաստատէ: Ի հարկէ այդ տեսակ փորձեր մարդիկների վերայ անել կարելի չէ, բայց նայելով կենդանիների վերայ արած փորձերին (սիբիրեան վէրք կոչված վարակված հիւանդների արիւնով պատուաստելն) շատ հաւանական է ընդունել, որ այդ մանր կազմուածքների

հետ արգարև վարակիչ թոյներ կապ ունի: Ընդհանրապէս ախտաբեր թոյ-
ների էութեան խնդիրը վճռված չէ և չնայելով գիտնականների բոլոր
ջանքերին և աշխատութիւններին, այդ կողմից մեր տեղեկութիւնները թերի
են, մենք աւելի հանդիպում ենք զանազան տեսութիւնների և ենթադրու-
թիւնների քան թէ փաստական գիտելիքների:

Բարեբաղդաբար վարակիչ հիւանդութիւնների այն յատկութիւնները,
որոնք շարժում են առողջապահութեան հետաքրքրութիւնը, բաւական ան-
կախ են վարակիչ թոյների էութենից, ուստի և կարելի է յուսալ որ
հիմնվելով միայն վարակիչ հիւանդութիւնների առաջնապէս և տարածվե-
լու հանգամանքների տեղեկութիւնների վերայ, կարելի է գտնել նպատա-
կայարմար առողջապահական միջոցներ, վարակիչ հիւանդութիւնների դէմ
գործ դնելու, եթէ մինչև անգամ չյաջողի իմանալ վարակիչ թոյների
էութիւնը:

IV

Ընդհանրապէս առողջապահները երկու զխաւոր կարգ են բաժանում
վարակիչ հիւանդութիւնները, հիմնվելով նոցա տարածման եղանակների
վերայ, որոնք նմանապէս իւրաքանչիւր թոյնի յատկութենից և նորա գո-
յութեան պայմաններից կախու մն ունին:

Վարակիչ հիւանդութիւնների մի տեսակը փոխադրվում է հիւանդներից
առողջներին ուղղակի հպաւորութենից և մինչև անգամ միւսնոյն հիւանդի
բնակարանում ներկայ լինելուց, գտնվելով կարճ ժամանակ, կարճ-
կամ բնական հիւանդի բնակարանում կարելի է վարակվել, անգամ
հիւանդին չմօտենալով, ուրեմն պէտք է ենթադրել որ հիւանդը բոլորովին
պատրաստ թոյն է իրանից դուրս հանում (քրտինքով կամ շնչառութեամբ)
և բնակարանի օդի հետ խառնում: Հիւանդութիւնը աւելի ճշգրտութեամբ է
փոխադրվում, եթէ վարակիչ հիւթը ուղղակի առողջ մարդի արիւնի մէջ
է մղծանվում, օրինակ ինչպէս ծաղիկ պատուաստելու ժամանակ, երբ փո-
խադրում են ծաղիկ բշտիկի մէջ բովանդակածի մի կաթիլը մաշկի փոքրիկ
վերքի մէջ:

Այդ կարգի վարակիչ հիւանդութիւններին վերաբերում են. կարմիր
խտւորութիւն, ծակիւր, կարմիր բռն (рожа), բնական հիւանդի բնակարանում
կարելի է վարակվել:

Թունաւոր նիւթը, մարմնի մէջ մտնելով, գտնում է պայմաններ իւր բազ-
մանալու և վերանորոգութեան համար և դուրս է գալիս մարմնից բոլորովին
պատրաստ և վարակիչ յատկութեամբ, դորա պատճառով այդ կարգին
պատկանող հիւանդութիւնները կոչվում են կոնտակոզնայ (փոխադրա-
կան) հիւանդութիւններ (контагиозные болезни): Այդ կարգի հիւանդութիւն-
ներին Պէտէնզօֆերը անուանում է ծակի մէջ ծակիւր անհիւստ վարակիչ
հիւանդութիւնների, պատճառ որ դոցա ախտաբեր գործակալը մարդի կազ-
մուածքի մէջն է անում:

Դոցանից բացառութիւն «խիւ» ախտն է (syphilis), որին կարելի է անուանել զոռ իշխող վարակիչ հիւանդութիւն, որովհետեւ դա փոխադրվում է միմիայն հպաւորութեամբ (կամ ժառանգաբար) և ոչ օդի միջոցով:

Վարակիչ հիւանդութիւնների երկրորդ կարգին վերաբերում են այն տեսակները, որոնց թունաւոր նիւթը չէ փոխադրվում հիւանդից առողջին ոչ հպաւորութեան և ոչ օդի միջոցով, այդ հիւանդների ոչ շնչառութիւնը, ոչ քրտինքը, ոչ էկսկրէմէնտը շունին իւրեանց մէջ այն տեսակ նիւթեր, որոնք հպվելով կարողանային առողջներին վարակել, այդ հիւանդները ուրեմն պատրաստ թոյն չեն արտաքս հանում դորա զարգացման համար, հարկաւոր է անշուշտ մարդի կազմուածքից դուրս առանձին պայմանների, դա տեղի օդերեւոյթական, կլիմայական հանգամանքներն են, *) որոնք նպաստում են թոյնի զարգանալուն աճելուն:

Այդ կարգի վարակիչ հիւանդութիւններին վերաբերում են «լիւսեր» (վարդացաւ), խօլերան, բեղէն տենդը, ընդհատ տենդը, ժառանգական և քրիշտը: Այս բոլորը միջանորմալ հիւանդութիւններ են կոչվում կամ հարմար դասին ընդհատ տենդը վարակիչ հիւանդութիւնների, ինչպէս որ Պէտէն-Տօֆէրն է անուանում:

Դոցա մէջ ընդհատ տենդը մի առանձին տեղ է բռնում, որին կարելի է անուանել զոռ միջանորմալ հիւանդութիւն, որովհետեւ նորա թոյնի ծագումն կախումն չունի հիւանդի մարմնից, այլ նա կապված է բոլորովին երկրի զրութեան հանգամանքներից: Ի հարկէ դորա թոյնը կարող է օդային ընթացքով իւր սահմանից փոքր ինչ հեռաւորութեամբ տարածվել, բայց նա նոր տեղերում համաճարակ կարող չէ երևիլ, բացի մասնաւոր քանի մի դէպքերից:

Իսկ այդ դասին պատկանող մնացեալ վարակիչ հիւանդութիւնների առաջանալն հիւանդի մարմնից կախումն ունի, նորա համար որ թէպէտ ապացինք որ հիւանդի մարմինը իւր մէջից չէ դուրս հանում պատրաստ թոյն, այլ այս թոյնը կազմվում է մարմնից դուրս, բայց պէտք է ընդունել, որ հիւանդի կազմուածքը առաջացնում է մի բան, որի բացակայութիւնը թոյնին ընդունակութիւն չէ տալիս վերանորոգվելու և ախտաւորելու: Բացի դորանից այս վարակիչ նիւթերը կարող են տեղափոխվել իւրեանց կենդրոնից, թէ շորերի և թէ ապրանքների միջոցով, բաւական հեռու տեղեր և կարող են վերանորոգվել և աճել, եթէ կնպաստէ երկրի զրութիւնը, ուրեմն և կարող են համաճարակման պատճառ դառնալ:

Մենք ընդունում ենք, որ վարակիչ հիւանդութիւնների այս տեսակ բաժանումն շատ թէ քիչ թերի է և ժամանակին ի հարկէ պէտք է որ զանա-

(*) Թէ որքան գետնի ջրի մակերեւոյթը նպաստում է այդ կարգի վարակիչ հիւանդութիւնների վարակմանը, կապատրերը յետոյ, երբ կիսանքը ընդհատ անոցի վերայ:

զան փոփոխութիւնների ենթարկվի և նշանաւոր զարգացման հասնի, բայց դա համապատասխան է ակտաբեր թղթների յատկութիւնների և վարակիչ հիւանդութիւնների տարածման այժմեան տեղեկութիւններին:

Միւս յօդուածներում կդառնանք վարակիչ հիւանդութիւնների ծագման և տարածման մասնաւորութիւնները նկարագրելուն, և կհասնենք այն առողջապահական միջոցների վերայ, որոնք կարող են այդ հիւանդութիւնների առաջն առնել:

Բ. Բ. Գ. Տ. Գ.

Ա. Զ. Բ. Յ. Ի. Ն. ՏԵՍՈՒԹԻՒՆ:

Վեհափառ Վաթողիկոսը իմաստնաբար ճանաչելով մեր ազգի ներկայ բարոյական դրութիւնը, եւ բաջ գիտենալով, որ ազգի վերակենդանութեան միակ հիմնաւոր յոյսը մտքով եւ սրտով կրթված եւ դաստիարակված բարեխիղճ գործօններ եւ անդամներն են, ամենայն միջոցներ կաշխատի հնարագործել միշտ եւ ամեն տեղ հայազն մանուկների լուսաւորութեան մասին: Ա. Էջմիածնի մէջ Գէորգեան ձեմարանը ոչ միայն անապատացած Արարատեան դաշտի կենդանութիւն տուող է, ոչ միայն ազգին բարի եւ կրթված անդամներ պատրաստող է, այլ եւ Էջմիածինն իւր վաղեմի կենսական նշանակութիւն պիտի ստանայ, որով Էջմիածինը Հայութեան սիրտ պիտի լինի դարձեալ: Կյուսանք, որ ոչ ոք պիտի չմոռանայ, որ Էջմիածինն անհամեմատ բարձր է քանթէ որեւիցէ անձնաւորութիւնը, եւ բաբանչիւր Հայն պիտի բաջ հասկանայ, որ Էջմիածինը բարոյապէս Հայութեան տէր եւ իշխան է եղել եւ պիտի լինի: Հայն միշտ եւ ամեն տեղ պիտի մտածէ թէ Էջմիածինը Հայութեան ինչ գորաւոր ապաստարան եղած է եւ է: Մինչեւ տասնեւիններորդ դարս, որ իրաւունքով կարող է մարդափառի դար կոչվել, որ աննպատակ եւ անօգուտ վաստակ կհամարէ կրօնի եւ ազգութեան դէմ հալածանքը, զանազան ասիացի բարբարոսներէն քանիցս կրել է Էջմիածինը մահաբեր հալածանք, բայց նորա հիմաւորը Սուրբ Գրիգորի եւ Տրդատի շինած ամուր պատերը երբէք երբէք չքանդվեցան, այլ անսասան եւ կանգուն մնացին ցարդ, պահպանելով հայկեան ազգութիւնը: